Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի հոկտեմբերի** 31-**ի նիստի** N 4 **արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ.- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2017 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում (արձանագրություն N 1) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Կ.Լ.Աթոյանը, դոցենտ Ա.Գ.Հակոբյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N 297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշումը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի 2018-2019 ուսումնական տարվա վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման նպատակով վերանայվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2017 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում (արձանագրություն N 1) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում» վարձավճարների մասնակի փոխհատուցմանն առնչվող չափորոշիչները: Առաջարկվում է վերոնշյալ կարգում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի ժամանակավոր պաշտոնակատար Ն.Ս.Նավասարդյանի զեկուցագիրը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2017 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում (արձանագրություն N 1) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. 8-րդ կետը «առաջադիմության արդյունքները» բառերից հետո լրացնել (ՄՈԳ-ը՝ ոչ պակաս 80 տոկոս ցուցանիշը) բառերով:

2. 8-րդ կետի 1-7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 25 տոկոս.

2) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 35 տոկոս.

3) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 20 տոկոս.

4) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 20 տոկոս.

5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին՝ 25 տոկոս.

6) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին՝ 20 տոկոս.

7) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ քոլեջի տնօրինական խորհրդի հայեցողությամբ՝ 20-50 տոկոս.»:

3. 8-րդ կետի 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով՝

«8) Քոլեջի տնօրինական խորհրդի կողմից ներկայացված և համալսարանի ռեկտորի որոշմամբ հաստատված այլ ուսանողների:»:

4. 9-րդ կետում «կիսամյակի» բառերը փոխարինել «ուսումնական տարվա» բառերով:

5. 21-րդ կետում «կիսամյակն» և «կիսամյակի» բառերը փոխարինել «ուսումնական տարին» և «ուսումնական տարվա» բառերով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Հոկտեմբերի 31
Երևան